Մաֆիձոր եւ Գեոյ (Կապուտ) առ–ը, որոնք անցնում են համանուն գեղերի հանդերի մի–ջից, ոռոգում են հանդերն ու բաժանում–ները։ Այս վտակները բղխում են Նալթեօ–քեան եւ Օղեզ–Ողեկ լ–ից։ Ապա ընդու–նում է նոյնպէս ձախից Մեծ–օդիկ կամ Ողեկ առուակը, որ բղխում է Նալթեօկան լ–ի հիւսիսային փեշերից, անցնում է Ծէգի–ձորից եւ գեղից. հարաւից–հիւսիս ուղ–ղուած, թեքուում է արեւելք, անցնելով Բերդից, Մեծ–Բաղչայից, Պատրոնից (իշ–

խայի, միւսը հիւսիսում՝ արեւելեան քսխայի մուտքը։ Ինչպէս նկատելի է, թորգումի արեւելեան եւ արեւմտեան այս կրկնակի քսխանները հին ժամանակներում մեծ մրցում են ունեցել, որոնք աքնել են իրար գերազանցել։ Զախակող–մեան քսխան երկրորդական գիրք է գրաւել, աջակող–մեանը բարձր հռչակ, որին մինչեւ այսօր քիշ ասան են անուանում բնիկները։ Այս քիշը աւելի անտառների խորն է, անտառապատ, պողոտայով միացած է քսխա գեանը, սրբազան քաղաք եւ ապաստարանի անուն է թողել, մե–ծամեծ աւերակներ ունի, որոնք հին անցեալն են մատ–նանշում։ Այս երկու–քսխաների մէջ է Աբերնեսի գուռը, Աբերնես աւան, մացրան, եայլան, ախոռները եւ գո–մերը, որոնք ցոյց են տալիս Աբերնեսի եւ քիշի մէջ եղած մրցումը։ Սրանց մօտ են Ընդոզքի բերդը, աւանը, խոսի բերդն ու գեղը, Մելիտիսը եւ բազմաթիւ ուրիշ մեծա–մեծ աւանների ոստանների աւերակները, գերեզմանատները, գոլմենները, որոնք մարդուն ակամայ հետաքրքրում են, թա–փանցել այդ հին անցեալի դարեւոր խորհրդաւոր շինուած–քների եւ թումբերի տակ, որոնելու, գտնելու նրանց գաղտ–նիքը։ Թորգումի այս կենդրոնական անմատչելի անտառ–ները, ձորերն ու բազդատի լեռները կազմում են Գաւառի սիրտը, որի պեղումները գիտական աշխարհի առաջ պիտի բաց անեն Ճորոխի Աւազանի քիշի հետքերը։